ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 402

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «23» «09» 2019 թ.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Ն. Հարությունյանի, մի կողմից, և «Տիկնիկային արվեստի միջազգային միության հայկական կենտրոն՝ «Յունիմա-Հայաստան» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող նախագահ Ա. Սաֆարյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Պատվիրատուի կողմից հատկացված միջոցներն ուղղել 2019 թվականին սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին «Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային թատրոնների միջազգային փառատոնի կազմակերպման և անցկացման ծախսերին՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող ծրագրի (հավելված N1) և մասնակի ծախսերի նախահաշվի (հավելված N 2):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն պարտավոր է՝

2.1.1. ի կատարումն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թ. սեպտեմբերի 16-ի N 658-Ա/2 հրամանի՝ հինք ընդունելով «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատվերով իրականացվող մշակութային դրամաշնորհային ծրագրերի «Թատերարվեստի ստեղծագործական նախագծեր և միջոցառումներ» անվանակարգի մրցութային հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 15-ի նիստի արձանագրությունը՝ հատկացնել գումարը «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Արվեստների ծրագրի» «Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման «Թատերական ստեղծագործական ծրագրեր և նախագծեր» տողով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված անհատույց դրամաշնորհների հաշվին:

2.1.2. Պայմանագրի 2.3.7-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված առաջարկությունը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, քննարկել և Կատարողին ներկայացնել նախահաշվում փոփոխություն կատարելու կամ նոր ծախսային ուղղության ամրագրում կատարելու կամ դրանց կատարումը մերժելու մասին իր եզրակացությունը:

2.1.3. Պայմանագրի 6.1-ին կետում սահմանված ժամկետում ընդունել Կատարողի կողմից Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված հաշվետվությունը, ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը:

2.2. *Պատվիրատուն իրավունք ունի՝*

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ չմիջամտելով վերջինի գործունեությանը:

2.2.2. Կատարողի կողմից Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում հետ պահանջել փոխանցված գումարը, միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը:

2.2.3. Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարված աշխատանքները:

2.2.4. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում Կատարողից պահանջել ներկայացնել Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով նախատեսված հաշվետվությունը:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով ծրագրի, Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվի և Պայմանագրի պարտադիր պահանջները:

2.3.2. Պատվիրատուի պահանջով նրան հաղորդել տեղեկույթ աշխատանքների կատարման ընթացքի մասին:

2.3.3. Մինչև Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետի ավարտը Պատվիրատուին ներկայացնել հաշվետվություն (ֆինանսական և բովանդակային) իր կողմից իրականացված ծախսերի և կատարված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը պարունակում է ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթեր, ինչպես նաև Պատվիրատուի կողմից հաստատված ձևանմուշով լրացված ձևը, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառման իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը՝ կցելով էլեկտրոնային կրիչներ՝ 1 DVD տարբերակով տեսաֆիլմ, ասուլիսների և մամուլի հրապարակումների մասին, լուսանկար, ազդագիր, հրավիրատոմս և այլ տեղեկատվական նյութեր:

2.3.4. Պայմանագրից բխող աշխատանքները չկատարելու դեպքում վերադարձնել Պատվիրատուի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 1.0 (մեկ) տոկոսի չափով:

2.3.5. Հրապարակել Պատվիրատուի անունը, իսկ միջոցառման համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամփոփ տեղեկույթ՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին:

2.3.6. Ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ Պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները վերացնելու նպատակով:

2.3.7. Պայմանագրի գործողության ընթացքում, մինչև փաստացի ծախսերի իրականացումը, Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված գումարի 10 տոկոսը գերազանցող ծախսային ուղղությունների գումարների փոփոխությունների կամ նոր ծախսային ուղղության ամրագրման անհրաժեշտություն առաջանալու դեպքում (չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը), այդ մասին գրավոր առաջարկություն ներկայացնել Պատվիրատուին:

2.3.8. Սույն Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.4. *Կատարողը իրավունք ունի՝*

2.4.1.Պատվիրատուի կողմից Պայմանագրի 2.1.1-ին ենթակետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով Պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Պատվիրատուն Կատարողին հատկացնում է 15084.0 հազար (տասնհինգ միլիոն ութսունչորս հազար) դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն հավելվածի:

3.2. Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 90 %-ը Կատարողին հատկացվում է Պայմանագիրը կնքվելուց հետո՝ 5 բանկային օրվա ընթացքում, իսկ 10%-ը Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ 5 բանկային օրվա ընթացքում:

3.3. Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարը Կատարողին հատկացվում է իր բանկային հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

3.4. Համաձայն «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2019 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված աշխատանքները Կատարողի կողմից ներկայացվում են Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան Պայմանագրով սահմանված ժամկետում: Պատվիրատուի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն:

4.2. Մինչև Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրության ստորագրումը Կատարողը պետք է Պատվիրատուին ներկայացնի Պայմանագրի կատարմանն ուղղված՝ իր կողմից փաստացի կատարված ծախսերի վերջնահաշվարկը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ Պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու համար կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում մյուս կողմին պատճառած վնասների լրիվ ծավալով՝օրենքով սահմանված կարգով:

5.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում:

5.3. Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը Կողմերից որևէ մեկի համար այն շարունակելն աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում Կողմն իրավունք ունի կամ ստանալ Պայմանագրի 3.1.-ին կետով նախատեսված գումարի լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել Պայմանագրի հարկադիր կատարումը:

5.4. Պայմանագրի 1-ին կետով նախատեսված աշխատանքների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պատվիրատուին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 /հինգ հարյուրերորդական/ %-ի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրացույցային օրվա համար:

5.5. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար նախատեսված ժամկետները չպահպանելու դեպքում վերջինս Կատարողը Պատվիրատուին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 /հինգ հարյուրերորդական/ տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրացույցային օրվա համար:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը մինչև 2019 թ. հոկտեմբերի 29-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2019 թվականի նոյեմբերի 25-ը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

7.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

9.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2019 թ. դեկտեմբերի 5-ը:

9.2. Պայմանագրի գործողությունը տարածվում է 2019 թվականի սեպտեմբերի 15-ից հետո ծագած հարաբերությունների վրա.

10. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

10.1. Պայմանագիրը կազմված է 12 թերթից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

10.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

11. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011024313
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

_______________ Ն. Հարությունյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Տիկնիկային արվեստի միջազգային միության հայկական կենտրոն՝ «Յունիմա-Հայաստան» ՀԿ
ք. Երևան, Կիևյան փ. 24-18
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Սպանդ. մ/ճ
Հ/Հ 16304-8103747
ՀՎՀՀ 00060143
Հեռ.՝ 091 40-84-55
Նախագահ՝

_______________ Ա. Սաֆարյան

Կ.Տ.

Հավելված N1
23 09 2019 թ.
N 402 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ

«Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային թատրոնների՝ Հովհ. Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված միջազգային XIV փառատոնի

1	Կազմակերպության անվանում	Տիկնիկային արվեստի գործիչների միջազգային միության հայկական կենտրոն հասարակական կազմակերպություն (ՅՈՒՆԻՄԱ-ՀԱՅԱՍՏԱՆ)
2	Կազմակերպության գտնվելու վայր	ք. Երևան, Կիևյան փող. 24, բն. 18
3	Ծրագրի անվանում	«Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային թատրոնների՝ Հովհ. Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված միջազգային 14-րդ փառատոն»
3.1	Բովանդակություն	Տիկնիկային արվեստի գործիչների միջազգային միության հայկական կենտրոնը՝ ՅՈՒՆԻՄԱ-Հայաստանը, արդեն 14-րդ տարին է, ինչ Հայաստանում կազմակերպում է միջազգային այս փառատոնը՝ նպատակ ունենալով նպաստել և ծառայել մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակությանը, տիկնիկային արվեստի զարգացմանը, անհատի և ապագա քաղաքացու համակողմանի ձևավորմանը: Ի սկզբանե, ամենամյա այս փառատոների շարունակական և հետևողական նպատակն է նաև աշխուժացնել մշակութային կյանքը Հայաստանի մարզերում, հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում, Արցախում և Ջավախքում: Փառատոնի կայացմանը մշտապես նպաստել և աջակցել են ՀՀ Նախագահի աշխատակազմը, ՀՀ մշակույթի նախարարությունը, Հայաստանի մարզպետարանները, հիմնադրամներ, կազմակերպություններ, ընկերություններ: Փառատոնի հիմնադիր-հովանավորն է եղել Բաց հասարակության ինստիտուտի Հայաստանի օժանդակության Հիմնադրամը: Այս տարի փառատոնն անցկացվում է Տավուշի, Լոռու, Վայոց Ձորի, Սյունիքի մարզերում և Երևանում: Այն ՅՈՒՆԻՄԱ-Հայաստանի նախաձեռնությամբ կազմակերպված «Տիկնիկները հանուն խաղաղության և միջմշակութային երկխոսության» համաշխարհային երթի և տիկնիկային թատրոնների միջազգային փառատոնի օրգանական շարունակությունն է: Հատկապես կարևորվում են միջոցառումները Տավուշի, Լոռու, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի հեռավոր բնակավայրերի երեխաների համար, ովքեր տարիներով զրկված են նմանատիպ մշակութային հանդիպումներից, և մեծ

կարիք ունեն լիցքաթափման և ուրախ, [illegible] ապրելու: Ակնկալվում է, որ արտասահմանյան և հայկական թատրոնների ելույթները մեծ ոգևորություն կառաջացնեն Հայաստանի մարզերում, կնպաստեն նրանց մշակութային կյանքի զարգացմանը, նոր լիցք կհաղորդեն տեղի բնակչությանը՝ ապրելու և արարելու հայրենի հողի վրա:

Ինչպես ամեն տարի, այս տարի ևս փառատոնի մեկնարկը տեղի կունենա Դսեղ գյուղում՝ Հովհ. Թումանյանի հուշարձանին ծաղկեպսակի տեղադրման արարողությամբ: Սեպտեմբերի 15-ին Դսեղում կկայանան փառատոնի հանդիսավոր բացումը և առաջին ներկայացումները: Բացման արարողությանը ներկա են լինելու Հայաստանի բարձր պաշտոնատարներ, աշխարհի տարբեր երկրներից ժամանած՝ Հովհաննես Թումանյանի գերդաստանի շառավիղները և ազգականները: Հանրապետության տարբեր մարզերից Դսեղ են ժամանելու նաև բազմաթիվ հյուրեր, արվեստի գործիչներ, մտավորականներ, ՀՀ-ում հավատարմագրված արտերկրյա դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, UNIMA միջազգային կառույցի ղեկավարներ:

Փառատոնի հանդիսավոր բացման հանդիսավոր արարողության ժամանակ այստեղ կհավաքվեն փառատոնի բոլոր մասնակից երկրների ներկայացուցիչները՝ տարբեր ժողովուրդների հեքիաթների հերոսների հետ միասին:

Հրապարակը՝ ձևավորված դեկորներով վերածվելու է հեքիաթային աշխարհի, որտեղ երեխաները կհանդիպեն բազմաթիվ հեքիաթների սիրված հերոսների:

Թատերականացված ուրախ տոնախմբությունից հետո կսկսվեն փառատոնի առաջին ներկայացումները: Դրանք կցուցադրվեն Երևանում, Լոռու, Վայոց Ձորի, Սյունիքի, Տավուշի մարզերի տարբեր քաղաքներում, գյուղերում և ավաններում: Փառատոնի ավարտին մասնակից թատրոններին և նրանց կողմից տրված ներկայացումներին կշնորհվեն մրցանակներ և պատվոգրեր: Փառատոնի օրերին կտրվեն տիկնիկային արվեստի վարպետության և տիկնիկագործության դասեր, կկազմակերպվեն ամենօրյա երեկոյան ակումբներ, կանցկացվեն էքսկուրսիաներ, կցուցադրվեն տեսաֆիլմեր:

Փառատոնին մասնակցելու հրավիրված են տիկնիկային թատրոններ Վրաստանից, Ռուսաստանի Դաշնությունից, Իտալիայից, Չինաստանից, և այլ երկրներից, ինչպես նաև թատրոններ Արցախից և Հայաստանի տարբեր մարզերից:

		Փառատոնի ներկայացումները կդիտեն հազարավոր երեխաներ և մեծահասակներ: Ամեն օր գործելու է «Երեկոյան ակումբը», որի ընթացքում կայանալու են ներկայացումների քննարկումներ, մտքերի փոխանակումներ, հանրահայտ տիկնիկային գործիչների կողմից տրվելու են վարպետության դասեր և կազմակերպվելու են սեմինարներ հետևյալ թեմաներով- - Թումանյանի մշակութային ժառանգությունը՝ որպես մարդկային համախմբման և հոգևոր հաղորդակցման գործոն, - Մշակութային բազմազանությունը միջմշակութային երկխոսության և կայուն զարգացման երաշխիք, - Թումանյանը միջմշակութային երկխոսության ակունքներում, - Թումանյանի հեքիաթները աշխարհի տիկնիկային բեմերում: Փառատոնը լուսաբանվելու է ՅՈՒՆԻՍԱ միջազգային կառույցի պաշտոնական կայքէջում, համաշխարհային և հանրապետության զանգվածային լրատվամիջոցների կողմից:
3.2	Նպատակ	«Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային թատրոնների ամենամյա միջազգային փառատոնը նպատակ ունի նպաստել և ծառայել մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակությանը, տիկնիկային արվեստի զարգացմանը, անհատի և ապագա քաղաքացու ձևավորմանը: Ի սկզբանե, ամենամյա այս փառատոների շարունակական և հետևողական նպատակն է նաև աշխուժացնել մշակութային կյանքը Հայաստանի մարզերում, հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում, Արցախում և Ջավախքում:
3.3	Անցկացման ժամկետ	15.09.2019 – 28.10.2019
3.4	Անցկացման վայր	Տավուշի, Լոռու, Վայոց Ձորի, Սյունիքի մարզեր, Երևան
3.5	Ակնկալվող արդյունքներ	Փառատոնը կնպաստի Հայաստանում տիկնիկային արվեստի զարգացմանը և որակական աճին: Հանդիսատեսը հիմնականում ցածր և միջին տարիքի դպրոցականներն են, որոնք մեր երկրի ապագան են: Փառատոնի խաղացանկում ընդգրկված ներկայացումներն իրենց բարոյադաստիարակչական, գեղագիտական բարձր մակարդակով, համաշխարհային հեքիաթագրության և դասական հեքիաթագիրների ստեղծագործությունների խորիմաստ, ապագա քաղաքացու ձևավորմանը և կայացմանը նպաստող թեմաներով մեծ դեր կխաղան մեր մատաղ սերնդի, իբրև մարդկային և մշակութային վեհ արժեքներ կրող անհատի ձևավորման գործում: Վարպետության դասերի շնորհիվ հայ տիկնիկային գործիչները, և հատկապես երիտասարդ տիկնիկային գործիչները, համաշխարհային ճանաչում ունեցող վարպետներից ստացած դասընթացների արդյունքում է՛լ

		ավելի կկատարելագործեն իրենց մասնագիտական հմտությունները և գիտելիքները՝ հետագայում կիրառելով դրանք իրենց ստեղծագործություններում, և արդյունքում, համոզված ենք, կունենանք մասնագիտական առումով մեծ աճ և միջազգային ասպարեզում հայ տիկնիկային արվեստը հավուր պատշաճի ներկայացնող արվեստագետներ: Փառատոնը, ինչպես անցած 13 տարիներին, այս տարի նույնպես կնպաստի նոր տիկնիկային թատրոնների ստեղծմանը, որոնց իր մասնագիտական օգնությունը կցուցաբերեն ՅՈՒՆԻՄԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ լավագույն մասնագետները: Փառատոնի մասին կտեղեկանան ՅՈՒՆԻՄԱ-ի 98 ազգային կենտրոնները, որոնք կհետաքրքրվեն հաջորդ փառատոնով՝ ապահովելով նրա շարունակականությունը: Փառատոնի երևանյան մասի միջոցառումների շրջանակում նախատեսվում է արարողություն «Հանրապետության հրապարակ» մետրոյի կայարանի հարևանությամբ գտնվող «Խաղաղության ծառի» մոտ, որը 2015թ. հունիսի 3-ին, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի տարում, հինգ մայրցամաքներից բերված հող ու ջրով տնկել են «Տիկնիկները հանուն խաղաղության և միջմշակութային երկխոսության» համաշխարհային երթի և «Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային թատրոնների միջազգային 10-րդ փառատոնի մասնակիցները՝ ի նշանավորումն ՅՈՒՆԵՍԿՕ-ի հիմնադրման 70-ամյակի, նաև հարգանքի տուրք մատուցելով 100 տարի առաջ նահատակված, որբացած և հայրենազրկված հայ մանուկների հիշատակին: Փառատոնը նպաստել և նպաստում է նաև մեծն Հովհաննես Թումանյանի միջազգային ճանաչման իրազեկվածության էլ ավելի բարձրացմանը, հանրապետությունում զբոսաշրջության զարգացմանը, մարզերում մշակութային կյանքի աշխուժացմանը: Այն սիրված և սպասված փառատոն է: Փառատոնը Հայաստանի մշակութային կյանքի խոշոր իրադարձություն է և կազմում է Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների օրգանական մասը: Փառատոնն ավարտվելու է սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի Հանրապետության անկախության տարեդարձի օրը, որը համընկնում է նաև Խաղաղության միջազգային օրվան:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Փառատոնի հիմնական **ոչ ֆինանսական** ցուցանիշներն են՝ - Փառատոնին ընդհանուր առմամբ մասնակցելու է 24 թատրոն և թատերախումբ՝ յուրաքանչյուրը 2-ական ներկայացմամբ,

		- Արտերկրի 6 երկրներից ժամանելու են 9 թատրոններ, - Հայաստանից և Արցախից փառատոնին մասնակցելու են 15 թատրոններ, - Փառատոնի միջոցառումներն ու ներկայացումներն ընդգրկելու են Հայաստանի 4 մարզերի 43 բնակավայրերը, մայրաքաղաք Երևանը, - Փառատոնի հանդիսատեսների ակնկալվող քանակն է 7800 մարդ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011024313
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

_____ Ն. Հարությունյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Տիկնիկային արվեստի միջազգային միության հայկական կենտրոն՝
«Յունիմա-Հայաստան» ՀԿ
ք. Երևան, Կիևյան փ. 24-18
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Սպանդ. մ/հ
Հ/Հ 16304-8103747
ՀՎՀՀ 00060143
Հեռ.՝ 091 40-84-55
Նախագահ՝

_____ Ա. Սահակյան

Կ.Տ.

Հավելված N2
23 09 2019 թ.
N402 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային թատրոնների միջազգային փառատոնի կազմակերպման և անցկացման *մասնակի* ծախսերի
(2019 թ. ընթացքում)

Հ/Հ	Ծախսերի անվանումը	Քանակ, միավոր	Միավորի արժեք (դրամ)	Գումար (հազ. դրամ)
1.	**Տրանսպորտային ծախսեր՝**			448.0
1.1	Նախապատրաստական շրջանի և փառատոնի ընթացքում մասնակիցների տեղափոխում Երևան-Դսեղ-Երևան, Երևան-Եղեգնաձոր-Երևան, Երևան-Գորիս-Երևան երթուղիներով և Վայոց ձորի, Սյունիքի մարզերի այլ քաղաքներ և գյուղեր */ՀՀ մարզերից և ԼՂՀ-ից՝ 15 թատերախումբ, արտերկրներից՝ 9 թատերախումբ/*, ինչպես նաև արտերկրների թատերախմբերի դիմավորում և Ճանապարհում *("Հվարթնոց" օդանավ.)* ա/ բենզին (1 միկրոավտոբուս՝ 14 տեղանոց) բ/դիզելային վառելիք (24 տեղանոց և 16 տեղանոց՝ 3 միկրոավտոբուս) գ/ վարորդի վաճատրություն	1 մեքենա՝ 118 լ բենզին, 3 մեքենա՝ 345 լ դիզ. վառելիք 4 մարդ	բենզին՝ 1 լ՝ 420 դիզելային վարելիք՝ 1 լ՝ 430 1 մարդը՝ 62500	198.0 250.0
2.	**Փառատոնի մասնակիցների սնունդ և գիշերավարձ**			7284.0
2.1.	***Արտասահմանյան հյուրերի և մասնակիցների համար***			*5916.0*
2.1.1.	Հյուրանոց Երևանում	10 մարդ, 2 օր	1 մարդ օրը՝ 24900	498.0
2.1.2.	Գիշերավարձ մարզերում	63 մարդ, 6 օր	1 մարդ օրը՝ միջինը 5000	1890.0
2.1.3.	Օրապահիկ	63 մարդ, 7 օր	1 մարդ օրը՝ 8000	3528.0
2.2.	***Հայաստանյան մասնակիցների համար***			*1368.0*
2.2.1.	Գիշերավարձ մարզերու	72 մարդ, 2 օր	1 մարդ օրը՝ 5000	720.0
2.2	Օրապահիկ	72 մարդ, 3 օր	1 մարդ օրը՝ 3000	648.0

3.	**Գովազդային նյութերի պատրաստման և տպագրական ծախսեր**			[illegible]
3.1.	Ազդագիր	200 հատ	1 հատը՝ 360	72.0
3.2.	Ծրագիր (Ա3 ֆորմատի)	200 հատ	1 հատը՝ 360	72.0
3.3.	Պատվոգիր և դիպլոմ	50 հատ	1 հատը՝ 400	20.0
3.4.	Կրծքանշան	200 հատ	1 հատը՝ 300	60.0
3.5.	Պաստառ (տարբեր չափերի)	57 քառ. մ	1 քառ. մ՝ 2000	114.0
3.6.	Տեսաֆիլմ (նկարահում և մոնտաժ)			450.0
4.	**Կազմակերպական խմբի վարձատրություն**			**1150.0**
4.1.	Փառատոնի ծրագրի հեղինակ և ղեկավար	1 մարդ՝ 2 ամիս	ամիսը՝ 375000	750.0
4.2.	Փառատոնի կազմակերպիչ	4 մարդ	1 մարդ՝ 100000	400.0
5.	**Վարձակալական ծախսեր**			**2900.0**
5.1.	Շարժական բեմ (ներառյալ՝ վարագույր, շիրմա, կուլիսներ, 5 մետաղյա շարժական հենակներ, 2 լուսարձակ հենակների վրա)	8 բեմ (չափսը՝ (5 x3 քառ.մ), 4 օր	1 բեմ՝ օրը 60000	1920.0
5.2.	Հնչյունային սարքավորում (մագնիտոֆոն, համակարգիչ, ուժեղացուցիչ, բարձրախոս՝ 2 հատ, խոսափող՝ 2 հատ)	7 օր	օրը՝ 140000	980.0
	Ընդամենը՝ ծախսեր			**12570.0**
6.	**ԱԱՀ**			**2514.0**
	ԸՆԴԱՄԵՆԸ			**15084.0**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն

Երևան, Վազգեն Սարգսյան 3,

Կառավարական տուն 2

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՀՀ 900011024313

ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

Ն. Հարությունյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Տիկնիկային արվեստի միջազգային միության հայկական կենտրոն՝ «Ունիմա-Հայաստան» ՀԿ

ք. Երևան, Կիևյան փ. 24-18

«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Սպանդ. մ/ճ

Հ/Հ 16304-8103747

ՀՎՀՀ 00060143

Հեռ. 091 40-84-55

Նախագահ

Ա. Սաֆարյան

Կ. Տ.